Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
մայիսի 13 -ի N 562 - Ա որոշման

# Ց Ա Ն Կ

## «ԳՈԼԴՆ ԳՐԵՅՊ ԱՐՄԱՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

| NN ը/կ | ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը | Անվանումը | Ծագման երկիրը | Չափման միավորը | Քանակը | Ներմուծման ժամկետը | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 9406 00 | Հավաքովի շինարարական կոնստրուկցիաներ | Իտալիա | հատ | 1 | Տարի/եռամսյակ, կիսամյակ | 536667747 |
| 2 | 7610 10 | Դռներ, դրանդիներ, պատուհաններ և պատուհանագոգեր | Իտալիա | հատ | 130 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 124924569 |
| 3 | 7610 90 | Պատուհանների ալյումինե մասեր | Իտալիա | հատ | 8 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 4 | 7308 30 | Չժանգոտվող մետաղից դռներ | Իտալիա | հատ | 10 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 5 | 4416 00 | Տակառ փայտյա և դրանց մասեր | Իտալիա | հատ | 80 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 606375000 |
| 6 | 8205 90 | Գործիքների հավաքածու | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 30992500 |
| 7 | 3918 10 | Հատակի ծածկ` պոլիվինիլքլորիդով ծածկված կամ ներծծված | Իտալիա | մ.ք. | 4000 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 103010985 |
| 8 | 6907 90 | Կրկնակի սալիկներ «շպալտպլատենե | Իտալիա | մ.ք. | 4000 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 305658276 |
| 9 | 3820 00 | Հակասառեցման հեղուկ | Իտալիա | կգ | 5000 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 10780000 |
| 10 | 8426 12 | Ամբարձիչ սարքավորումներ | Իտալիա | հատ | 3 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 131516000 |
| 11 | 8705 40 | Ավտոբետոնախառնիչ | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 94325000 |
| 12 | 4006 90 | Ռետինե խողովակներ | Իտալիա | մ | 300 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 2795793 |
| 13 | 8716 39 | Կիսակցորդներ | Իտալիա | հատ | 4 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 43120000 |
| 14 | 9402 90 | Քիմիական լաբորատորիայի | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II | 46138400 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | կահույք | | | | կիսամյակ) | |
| 15 | 4412 99 | Փայտե պանելներ | Իտալիա | կգ | 15000 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 4204200 |
| 16 | 8701 90 | Գյուղատնտեսական աշխատանքների համար տրակտոր | Իտալիա | հատ | 2 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 28238210 |
| 17 | 8433 20 | Ներտաշման շտկոց | Իտալիա | հատ | 5 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 20676040 |
| 18 | 8432 29 | Արմատահանիչ | Իտալիա | հատ | 3 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 1212750 |
| 19 | 8427 20 | Ավտոամբարձիչ | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 28028000 |
| 20 | 8418 69 | Սառեցման սարքավորում | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 634942000 |
| 21 | 7309 00 | Հեղուկի տարա մինչև 100000 լիտր տարողությամբ | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 22 | 8413 70 | Պոմպ բազմաստիճան | Իտալիա | հատ | 6 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 23 | 7304 90 | Չժանգոտվող պողպատե խողովակներ | Իտալիա | մ | 1609 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 24 | 7307 22 | Չժանգոտվող պողպատե արմունկներ, ամրաններ, եռաբաշխիչներ և այլ մասեր | Իտալիա | կգ | 8000 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 25 | 8419 50 | Ջերմափոխանակիչներ | Իտալիա | հատ | 3 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 26 | 7326 90 | Կախիչներ մետաղական | Իտալիա | հատ | 5 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 27 | 8536 50 | Մինչև 60Վ հզորությամբ լարման անջատիչներ | Իտալիա | հատ | 6 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 28 | 8419 90 | Ջերմափոխանակիչի մասեր | Իտալիա | հատ | 2 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 29 | 8479 89 | Ընդարձակման բաք | Իտալիա | հատ | 4 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 30 | 8481 40 | Անվտանգության փական | Իտալիա | հատ | 7 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 31 | 3917 23 | Պոլիվինիլքլորիդային խողովակներ | Իտալիա | մ | 21 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 32 | 8415 83 | Օդորակման սարք | Իտալիա | հատ | 5 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 33 | 9026 80 | Խոնավության | Իտալիա | հատ | 2 | 2010 (II, III, IV | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հսկողության սարք | | | | եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 34 | 8481 80 | Կլապաններ, փականներ և խողովակների մասեր | Իտալիա | հատ | 23 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 35 | 8419 89 | Մղիչ սարքավորում | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 36 | 8419 89 | Ավտոկլավ | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 37 | 8481 80 | Հեղուկի փականներ | Իտալիա | հատ | 50 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 38 | 8419 89 | Ջրի փափկացնող սարք | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 39 | 8414 40 | Օդի կոմպրեսոր և մասեր | Իտալիա | հատ | 2 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 40 | 8421 39 | Օդի ֆիլտրման սարքավորում | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 41 | 8481 80 | Դարձկեն սահափական | Իտալիա | հատ | 15 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 42 | 8402 19 | Գոլորշու կաթսաներ և մասեր | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 43 | 8416 20 | Գազայրոց, ծխնելույզներ և այլ մասեր | Իտալիա | հատ | 27 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 44 | 8481 30 | Հետադարձ փական | Իտալիա | հատ | 3 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 45 | 9026 20 | Մանոմետր | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 46 | 8481 10 | Ռեդուկցիոն ճնշման կարգավորման փականներ | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 47 | 8481 40 | Անվտանգության փական | Իտալիա | հատ | 7 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 48 | 3909 50 | Պոլիուրետան մեկուսիչ | Իտալիա | կգ | 800 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 49 | 7219 34 | Չժանգոտող մետաղյա թիթեղներ | Իտալիա | կգ | 2000 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 50 | 7326 90 | Այլ ջրահեռացման մասեր | Իտալիա | մ | 40 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 51 | 8423 90 | Կշռման մեքենա | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 22691900 |
| 52 | 7219 90 | Մետաղյա թիթեղներ այլ | Իտալիա | կգ | 415000 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 781550000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 53 | 8481 80 | Փականների, կապույրների ներառյալ ջերմային կառավարմամբ և այլ մասերի հավաքածու | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 8624000 |
| 54 | 8515 39 | Զոդման մեքենա | Իտալիա | հատ | 4 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 30184000 |
| 55 | 8419 40 | Դիստիլացման սարք | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 331485000 |
| 56 | 7309 00 | Տարաներ | Իտալիա | հատ | 60 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 404250000 |
| 57 | 8435 10 | Գինեգործական սարքավորումներ, մամլիչներ, ջարդիչներ և այլ նմանատիպ սարքավորում | Իտալիա | հատ | 65 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 948640000 |
| 58 | 8422 30 | Շշալցման սարքավորում | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 211288000 |
| 59 | 8705 90 | Տելեսկոպիկ ամբարձիչ | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 78155000 |
| 60 | 8428 90 | Ինքնաշարժ հարթակ | Իտալիա | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 46354000 |
| 61 | 8504 21 | 650 կՎ հզորությունը չգերազանցող տրանսֆորմատորներ և դրա բաղկացուցիչ մասեր | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 10348800 |
| 62 | 8532 10 | Կոնդենսատորներ և դրա բաղկացուցիչ մասեր | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 4851000 |
| 63 | 8535 10 | Էլ. Ապահովիչներ | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 3234000 |
| 64 | 8535 21 | Ավտոմատ շղթայի անջատիչներ 72.5 Կվ-ից պակաս և մասեր | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 9702000 |
| 65 | 8535 30 | Բաժանիչներ, ընդհատիչներ, անջատիչներ 72.5 Կվ-ից պակաս | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 9702000 |
| 66 | 8535 40 | Շանթարգել, վոլտաժային սահմանափակիչներ, գերլարման սահմանափակիչներ և մասեր | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 1293600 |
| 67 | 853610 | Էլ. ապահովիչներ | Իտալիա | կոմպլեկտ | 3 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 970200 |
| 68 | 8536 20 | Էլ. անջատիչներ | Իտալիա | կոմպլեկտ | 2 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 22638000 |
| 69 | 8536 41 | Ռելեներ | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV | 646800 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 70 | 8536 61 | Լամպի կոթառներ | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 64680 |
| 71 | 8536 90 | Մետաղալարերի և մալուխների միացման կոնտակտային տարրեր, լարերի միացուցիչների և սեղմակների հավաքածու և մասեր | Իտալիա | կոմպլեկտ | 3 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 43227000 |
| 72 | 8537 10 | Թվային վերահսկման պանելներ, ներկառուցված ավտոմատ տվյալների մշակման մեքենաներ, ծրագրավորվող հիշողության հսկիչ սարքեր, որոնք սարքավորված են էլեկտրոնային հաղորդիչներով և միացուցիչներով և մասեր, այդ թվում նաև մետաղյա արկղներ | Իտալիա | կոմպլեկտ | 4 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 29106000 |
| 73 | 8537 20 | Թվային վերահսկման պանելներ, ներկառուցված ավտոմատ տվյալների մշակման մեքենաներ, ծրագրավորվող հիշողության հսկիչ սարքեր, որոնք սարքավորված են էլեկտրոնային հաղորդիչներով և միացուցիչներով և մասեր` 1000Վ գերազանցությամբ | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 22638000 |
| 74 | 8539 10 | Հերմետիկ լամպեր | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 5174400 |
| 75 | 8539 21 | Հալոգենային լամպեր | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 8408400 |
| 76 | 8539 22 | Ռեֆլեկտորային լամպեր | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 22638000 |
| 77 | 8539 39 | Ռեֆլեկտորային լամպեր 200Վ հզորությունից բարձր | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 22907500 |
| 78 | 8544 42 | Մալուխների և լարերի կոմպլեկտներ | Իտալիա | կոմպլեկտ | 2 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 3234000 |
| 79 | 8544 49 | Այլ մալուխներ և լարեր | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 63602000 |
| 80 | 8544 60 | 1000Վ հզորությամբ | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV | 9702000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | պղնձյա հաղորդիչներ | | | | եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | |
| 81 | 8547 20 | Պլաստմասայից մեկուսացնող ամրաններ | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 4527600 |
| 82 | 3917 23 | Պլաստմասայե խողովակների և ֆիտինգների հավաքածու | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 18110400 |
| 83 | 7907 00 | Ցինկե փողակներ, խողովակներ, միացումներ, արմունկներ, ճկափողեր և մասեր | Իտալիա | կոմպլեկտ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 26518800 |
| 84 | 8431 49 | Հիդրոմուրճ, կոմպլեկտավորող մասերով | ԱՄՆ | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 4870000 |
| 85 | 8716 20 | Անիվավոր կցորդ | ԱՄՆ | հատ | 5 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 12000000 |
| 86 | 8431 41 | Մետաղական կովշ, կոմպլեկտավորող մասերով | ԱՄՆ | հատ | 5 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 10000000 |
| 87 | 8431 49 | Էքսկավատորի մետաղական թրթուռ, կոմպլեկտավորող մասերով | ԱՄՆ | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 1566000 |
| 88 | 8701 20 | Տրակտոր 32 ձիաուժ գյուղատնտեսական նշանակության, կոմպլեկտավորող մասերով | Ճապոնիա | հատ | 4 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 40000000 |
| 89 | 8432 29 | Կցորդիչ փոցխ, հարթեցնող սարքավորում, կոմպլեկտավորող մասերով | ԱՄՆ | հատ | 10 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 14000000 |
| 90 | 8467 89 | Հեղուկ վառելիքային շարժիչով հող հարթեցնող գործիք, կոմպլեկտավորող մասերով | ԱՄՆ | հատ | 20 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 6000000 |
| 91 | 4011 10 | Մարդատար ավտոմեքենայի անվադողեր | ԱՄՆ | հատ | 12 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 1600000 |
| 92 | 4016 99 | Մետաղյա հիմքով ռետինե խցուկ | ԱՄՆ | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 26800 |
| 93 | 8421 23 | Բենզինի ֆիլտր | ԱՄՆ | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 19200 |
| 94 | 4016 99 | Կարբյուրատորի ռեմ.կոմպլեկտ, միջնաշերտ | ԱՄՆ | հատ | 1 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 106000 |
| 95 | 8305 20 | Թղթյա միջնաշերտ ամրանի համար | Չինաստան | հատ | 500 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 10000000 |
| 96 | 8305 20 | Ստեպլերի մետաղական լիցքեր | Չինաստան | հատ | 100 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II | 1600000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | կիսամյակ) | |
| 97 | 8205 51 | Խաղողի վազի ստեպլեր | Չինաստան | հատ | 30 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 800000 |
| 98 | 82015000-6000 | Մկրատներ սեկատորներ | Չինաստան | հատ | 50 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 1000000 |
| 99 | 8211 92 | Խաղող կտրելու դանակ | Չինաստան | հատ | 100 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 400000 |
| 100 | 3926 99 | Թղթյա ժապավեններ | Չինաստան | հատ | 200 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 400000 |
| 101 | 8201 90 | Ձեռքի մեխանիկական գյուղատնտեսական գործիքներ | Չինաստան | հատ | 250 | 2010 (II, III, IV եռամսյակ) – 2011 (I, II կիսամյակ) | 4000000 |
| 102 | Ընդամենը | | | | | | 6068460550 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
մայիսի 13 -ի N 562 - Ա որոշման

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N

«ԳՈԼԴՆ ԳՐԵՅՊ ԱՐՄԱՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երևան ------- ----------------- 2010թ.

Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ` նախարարություն), ի դեմս ----------------------------------------, մի կողմից, և «ԳՈԼԴՆ ԳՐԵՅՊ ԱՐՄԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, ի դեմս ----------------------------------- (այսուհետ` ընկերություն), մյուս կողմից (նախարարությունը և ընկերությունը միասին հիշատակելու դեպքում, այսուհետ` կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 13-ի N 562 -Ա որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ` պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրով ընկերությունը պարտավորվում է կատարել Հայաստանի Հանրապետու- թյան կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածով սահմանված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը հաստատելու մասին» N 600-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտրված ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրով

(այսուհետ՝ ծրագիր) նախատեսված աշխատանքները, իսկ նախարարությունը պարտավորվում է իր իրավասությունների շրջանակներում աջակցել ընկերությանը ծրագրի իրականացման գործընթացում:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. Նախարարությունը պարտավոր է՝

2.1.1. կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ:

2.2. Նախարարությունն իրավունք ունի՝

2.2.1. կատարելու ընկերության կողմից իրականացվող ծրագրի նկատմամբ վերահսկողություն.

2.2.2. պահանջելու ընկերությունից ներկայացնել պայմանագրի 3.6-րդ կետով սահմանված հաշվետվությունները:

2.3. Ընկերությունը պարտավոր է՝

2.3.1. մինչև 2011 թվականի փետրվարի 1-ն ավարտել ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացված ներդրումային ծրագրում նշված խաղողի վերամշակման, գինու և կոնյակի արտադրության կազմակերպումը.

2.3.2. պայմանագրի 2.3.1-ին ենթակետով նշված ծրագրի շրջանակներում ստեղծել առնվազն 80 նոր աշխատատեղ՝ ապահովելով վերջիններիս մոտ 70 հազ. դրամ միջին աշխատավարձով.

2.3.3. հարկային պարտավորությունները և սոցիալական ապահովության վճարներն ավելացնել աշխատողների թվաքանակի և արտադրանքի իրացման ծավալների ավելացմանը համապատասխան.

2.3.4. կատարել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ տրված ցուցումները.

2.3.5. իրականացնել ծրագրով նախատեսված այլ անհրաժեշտ աշխատանքներ:

2.4. Ընկերությունն իրավունք ունի`

2.4.1. ինքնուրույն որոշելու ծրագրի իրականացման մեխանիզմները.

2.4.2. ծրագրի իրականացմանը ներգրավել այլ կազմակերպությունների և անհատ փորձագետների, որոնց կողմից իրականացվող աշխատանքների որակի պատասխանատվությունը կրում է ընկերությունը:

3. Հաշվետվություն և մոնիթորինգ

3.1. Ընկերության կողմից ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացվում է մոնիթորինգ:

3.2. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է իրականացնել ծրագրի շրջանակներում մոնիթորինգ, ինչպես նաև ուսումնասիրել ընկերության կողմից իրականացված մոնիթորինգը և ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր ու նյութեր:

3.3. Մոնիթորինգի ընթացքում բացահայտված թերացումների և բացթողումների շտկման նպատակով նախարարության կողմից ընկերությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարության կողմից իրականացվող մոնիթորինգի ընթացքում ընկերությունից կարող են պահանջվել գրավոր և բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.5. Մոնիթորինգն իրականացվում է ծրագրով ստանձնած պարտավորությությունների կատարման ընթացքը գնահատելու նպատակով:

3.6. Ընկերությունը նախարարությանը ներկայացնում է եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ (տեքստային և ֆինանսական):

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Ընկերությունը պայմանագրով և ծրագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, նախարարության վերահսկողությունից խուսափելու դեպքում նախարարությունն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու ընկերությունից վճարելու հետաձգված` Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 13-ի N 562 -Ա որոշման N 1 հավելվածով սահմանված` ընկերության կողմից ներմուծվող ապրանքների ընդհանուր գումարից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը՝ ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման օրվանից մինչև գործարքն իրականացնելու հաշվետու ժամանակաշրջանի ավարտը` «Ավելացված արժեքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4.2. Կողմերը համաձայնվում են պայմանագրի շուրջ ծագող տարաձայնությունները կարգավորել բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև ծրագրի պատշաճ իրականացման ավարտը:

5.2. Ծրագիրը համարվում է կատարված պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման դեպքում:

## 6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը` դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.2. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Պայմանագիրը կնքված է հայերենով` 2 օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

## 8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ